



Ամսագրոյս վերջին թերթի ի մամուլ յանձնուած միջոցում՝ Մոսկ-
վայէն Յունիս 10 ամսաթուով գրուած կիսապաշտօնական մի նամակէ ցաւ
ի սիրտ հետեւեալ գութը ընդունեցինք, զի

ՍՏԵՓԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ՅՅՈՆԱՆԵԱՆՅ

— ցաւալի իմն արկածիւ յ30-ն Մայիսի յերկոտառաներորդ ժամու ե-
րեկոյեան Մոսկվայի արուարձաններէն Կոնստանտինով ամարանոցում ի գետն
լուացուած ժամանակ՝ կիսորասուզուի եւ խեղդամահ մարմինն կանհե-
տանայ, զոր հազիւ լողագէտք ի յաջորդ աւուրն կ'յաջողին գտանել, եւ
ի 5-ն Յունիս ամսոյս մեծահանդէս եւ արժանաւոր յուղարկաւորու-
թեամբ մարմինը ի գերեզման կամփոփուի, եւ այս առթիւ Բարեկր-
թակոր Աւագ քահանայ Սուրէնեանց մի դամբանական ճառ կ'ընթեռնու՝
զոր Ամսագրոյս յաջորդ թերթում հրատարակել արժան կ'համարիմք:

Հանգուցեալն, որ Վսեմ. Պ. Յովհաննէս Յօնանեանցի երեց որդին եւ
37 տարեկան հասակում էր, այսպիսի վշտալի միանգամայն տարաժամ
իմն մահուամբ ի խոր սուգ համակեց իւր պատուական եւ բարեպաշտ
ծնողը, իւր համեստափայլ ամուսինը եւ սիրասուն դստերքը, իւր սիրելի
եղբարքը՝ քոյրերը՝ եւ համայն ազգականները եւ բարեկամները՝ ինչպէս
նա եւ Մոսկվայի բոլոր մերազնեայ ժողովուրդը՝ որոց առհասարակ սիրե-
լի եւ յարգելի եղած էր:

Ուստի եւ մեք փութալով յայտնել մեր խորին ցաւակցութիւնը՝ կ'իսնդ-
րեմք օրհնել Աստուածային կամաց անդառնալի տնօրէնութիւնը, եւ Հո-
գւոյն սրբոյ մխիթարութիւնը վերակոչելով ի սփոփանս սրտից եւ հոգւոց
Հանգուցելոյն ծնող Վսեմ. Յովհաննէս Յօնանեանցի եւ համայն ազնիւ
ընտանեացն՝ ազգականաց եւ բարեկամաց, միանգամայն կ'բարեմաղթեմք՝
զի Բարձրեայն Աստուած լուսաւորեսցէ զհոգի բարեյիշատակ Ստեփան
Յովհաննէսեան Յօնանեանցի հանգուցանելով ի լոյս երեսաց Իւրոց: